Արձանագրություն N 3
ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/12 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18 հուլիսի 2018թ
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Սարգիս Ստեփանյան

անդամներ՝ Աշոտ Քթոյան, Էրիկ Համբարձումյան,

Մարիամ Ղազանչյան, Պավել Ֆյոդորով

քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

I. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին
(Սարգիս Ստեփանյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից 2018 թվականի հուլիսի 17-ին ստացվել է Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով ներկայացրած հայտարարությանը համապատասխան եզրակացությունը:

2. Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ից 2018 թվականի հուլիսի 17-ին ստացվել է տեղեկատվություն գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու մասին:

3. Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, հաշվի առնելով, որ առկա են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի գ/ մասով նախատեսված հիմքերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Ս. Ստեփանյան /նախագահ/

Ա. Քթոյան

Է. Համբարձումյան

Մ. Ղազանչյան

Պ. Ֆյոդորով

Ս. Պետրոսյան /քարտուղար/